

ւորական երեսփոխան կրինուոնին այդ օրերուն յայտարած էր, թէ «Լիթուպիան պիտի մնայ եզական օրինակ մը դաւանանութեան, զոր մեծ պետութիւնները ի գործ դրին, հակառակ իրենց խոսուածին:»

Անգլիացի երեսփոխանը ըստ երեւոյթին շատ կարճ յիշողութիւն ունի, վասնզի պէտք էր գիտնար, թէ Եթովպիա ո՛չ առաջինը եւ ոչ ալ վերջինն էր այն ժողովուրդներուն մէջ, որոնք զոհերը եղած էին քաղաքական սադրանքներու: Գոնէ մենք՝ Հայերս մեր մորթին վրայ զգացած ենք այդ ցաւը եւ լաւապէս կ'ըմբռնենք, թէ ի՞նչ կ'արժեն մեծերու կողմէ այնքան շռայլօրէն փոքրերուն տրուած ազատութեան խոստումները:

Այսպէս՝ Հայերը եւ Հապէշները, որոնք անցեալին մէջ, հակառակ իրենց երկիրներուն հեռաւորութեան, իբր դաւանակիցներ՝ միշտ համակրանք ունեցած էին իրարու հանդէպ, եղան վիճակակիցներ եւ բախտակիցներ:

Այս դժբախտ առիթով, «Ազատ Միտք» շաբաթաթերթին մէջ ատենին հրատարակեցի հայ եպիսկոպոսի մը մօտաւորապէս երկուքուկէս դար առաջ դէպի Հապէշիստան կատարած ուղեւորութեան նկարագրութիւնը, որ անծանօթ կը մնար:

Դժբախտաբար կիսատ մնաց գործը:

Հիմա նորէն այժմէականութիւն կ'ստանայ այս ձեռագիրը, վասնզի մեծ պետութիւնները իրենց շահերուն համապատասխան գտնելով նեցուկ կանգնիլ Հապէշիստանի, զոր քանի մը տարի առաջ այնքան անփառունակ կերպով լքած էին ով գիտէ ի՞նչ շարժառիթներով, քարտէզէն սրբուած եւ մոռցուած այս պետութիւնը վերականգնեցին. Եւ այս՝ իշխա